

յիւր երաժշտական երգոց. ճոխ էր եւ վարժարանն վարդապետական կրթութեամբ. նաեւ արհեստաւորք նկարչացն եւ գրողաց անհամեմատը » (նոյն, 165): Եթէ այս նկարագրին մէջ սիւնեցի մեծաբանութիւնը չկայ, ինչ որ հաւանական է, սակայն պատմչիս օրով իսկ արդէն պատմութեան կը վերաբերէր, եւ շատ հեռի ժամանակի վիճակէն: Այսպէս նաեւ Սանահին իւր խստամբեր կենաց ծաղկեալ շրջանին, այն է ԺԱ դարուն, կը կոչուի Մագիստրոսէ բնակարան «իմաստնոց բոլոր արհեստից եւ մականութեանց պարառելոց» (136): Բայց քիչ վերջ կիլիկեան լուսաւորաց՝ Գրիգոր Տղայի եւ Ներս. Լամբրոնացւոյն դէմ անոնց՝ կամ որ նոյն է՝ Հաղբատացւոց վարած պատերազմը՝ հոն մտած եւ կամ պահուած հզօր մտայնութեան մը գրաւականը չէ, թէեւ Յովհ. Սարկաւազ մը տուած լինէին: Տարսոնի եպիսկոպոսը կ'ըսէ՝ թէ «այնքան կուրացեալք ի միմեանց նախանձուէ, մինչ զի ի բան խօսելն միոյն եւ միւսոյն ունչ առնելն՝ ամենայն վանականացն կատականք են եւ ծաղը» (Թղթ. 223-4): Իսկ կաթողիկոսը կը գրէ անոնց՝ թէ «հեռի էք յամենայն գիտութենէ հին եւ նոր կտակարանաց» (Տղ. 10), եւ թէ Հայոց քով «ոչ պա-